## 60. ԽԻՆԳԸ ԿՈՐԵՐ

Կէլնեն խինգյ կոր, մեկ տան մեչ մեյտեղ կփնակեն:

Օրին մեկ, էն մեյ կոր կէրթա մուրալ քյաղքյի մեչ: Մարթմ էլ ճամբան էրթացած գյանխ տաս ոսկի կկնդնի, կասի. - Աղէկ, էսա փարեն կնղն, ամա ես ինչխ մենակ ուտեմ, իմ սիրտ չպիրե: Ընկուն խեղճմ կնդնեմ, կես տամ ինոր, որ կեսն էլ իմ պերան էրթա, ես ուտեմ:

Կուգյն ճամբան էտա կուրուն ռաստ կուգյն:

- Ախպեր, - կասի, - դո՞ր կէրթաս:

Կասի. - Կէրթամ քյաղաքյ մուրալ: Բնլքյի զի աբՈւրմ անեմ:

Կասի. - Ախպե՛ր, արե՛, ես տաս ոսկի եմ կնդե, խինգյ զի, խինգյ՝ քյե: Կասի, խինգյ ոսկին կլցի կուրու ծեռ:

Կոր կխարցուցի, կասի. - Խինգյ էլ մնաց քյե՞:

Մարթն ի կասի. - Խա՛, խինգյ էլ մնաց զի:

Կասի. - Մե խա քյո խինգյն էլ լից իմ ծեռ, խենքյ ի՞մն ի ծանդր, թե՞ յյոն:

Ծեռնով ծանդր թեթիվ կանի, շուռ կուտա, էնտեխ, աչ ծեռաց ոսկիքյ կլցի ծախ ծոց, ծախ ծեռացն էլ կլցի աչ ծոց:

Մարթն ի կասի. - Ծո՛, ախպե՛ր, ի՞նչ կանես: Խինգյ ոսկին առ քյե, խինգյ տուր զիկ, է՛:

Կորն ի կասի. - Չէ՛, ի՞նչ խինգյ ոսկի, մո զի փարն չկա: Ոսկի ու՞ստ ի մո զիկ:

Կասի, կբաշլայի բոռալ:

Կասի. - Ամա՛ն, խասե՛քյ, էսա մարթն իկեր ի, քյանիմ փարն եմ ժողվե, իկե զիզնից կխլի:

Մարթեր կթափեն կբաշլայեն էտա մարթուն անարքել:

Մարթն էլ կամչնա, գյլեոխ կկախի ուր առաճ, կթողնի կնցնի, չում էտա մարթեր կզատանան: Աչք վեր կուրուն կպախի, կասի.

- Կայնի, խեմ էսա դոր կէրթաս:

Կորն ուրախ-ուրախ ուր ճամբան կպռնի, որ էրթա տուն: Մարթն էլ ուշիկ-ուշիկ իտևանց կէրթա մտնի ներս:

Տիսնա, որ ի՞նչ՝ չորս էլ կոր էնտեխ կան:

Կոր կէլնի պատռվնից ուր ոսկիքյ կառնի տակ, կուգյն ինգյերներաց կասի. - Էսօր իմ պան պարի եէր: Քսան ոսկի ունի, տսան էլ էկավ վերեն էսօր, էլավ եռսուն ոսկի, յավաշ-յավաշ կուտեմ:

• Կասի, կկապի, կխանգորցի, կբաշլայի թնլել վեր պռնել: Էն մարթ որ գյաղտիկ

ինոր իտևեն իկեր էր, վեր թռչելու գյոխ ծեռ կուտա ոսկու դեմ: Եոսուն ոսկին էլ մեյտեղ կառնի:

Բաշլայի ճվալ ուր ընկյերներաց վերեն, կասի. - Իմ ոսկին տվեքյ:

Ընկյերներուց մեկն կասի. - Իմ ոսկին գյեռ դոլաբն ի, էլեքյ պիրեքյ խսումբրեքյ:

Էն մեյն էլ կասի. - Իմուն խսրի ճոթի տայն ի:

Ախր ինդ իսճ, չորսն էլ ուրենց ոսկիյհոտերաց տեղ նշանց կուտան:

Կասի. - Էլի խամբրի. մենքյ խճբճր չենքյ:

Մարթն ի, որ կլսի ոսկիյհոտերաց տեղ, կէրթճ հմեն էլ կժողվի. կառնի:

Կէլնեն կորեր, որ ուրենց ոսկիքյ պիրեն նշանց տան, մեկու ոսկին էլ չեն կնդնե:

Բաշլայի էն ինոր, էն ինոր մեյմեկու աղկել: Տճռնա կորերաց մեյն վիրուցի կասի. - Ախպե՛ր, մեշ մե սաղ մարթ կա: Էլեքյ էրկուս տոտ պռնեքյ, մենքյ իրեքս փետերն առնենքյ չորս պհկոր զանենքյ. սաղ մարթուն պռնենքյ:

Կէլնեն ըսկուն կանեն. էրկուս փետեր կպռնեն կայնեն վեր տռան, էն իրեյն էլ փետեր մեչ տան կեռրեռխտեն: Սաղն ի դանակ կուտա մեյ կուրու սրտի մեչ, կշրճի էնտեխ, ինքյ կփախի:

Կէրթճ, աման ուր խիղճ ուր կտանջի, ուր սիրտ կմրմռա, կասի. - Ի՞նչխ անեմ, որ էլմ կիրցուցեմ ինոնց էսա փճրեն:

Էն մեկէլ օր լհս որ կպճցվի, էլմ էն կոր կուգյճ չարշին: Մարթ կասի.

- Էլնեմ էրթճմ, խաց առնեմ, նոր տամ, որ չիմնա:

Օխկեմ խուց կառնի, կպիրի կուտճ կուրուն, կասի՝ կե:

Կորն ի, որ խաց կառնի, կտնի պերան, ծամելու ժամանակ կիմնճ, որ ուր փարեն են տվե խաց առե:

Խսանի մարթու յախեն կպռնի, բաշլայի բոռալ:

Կասի. - Քյանիմ փճրճ մուրալով ժողվիցի, էսա մարթն էկավ զիգնից գյողցավ, մկա անոթի ծարավ ինգյիր եմ փոշհյետանքյ:

Մարթեր կուգյճն թճփեն վեր ինոր, փոլիս կպիրեն, էտա մարթուն վիրցել կուտան:

Մարթն ի կասի. - Ընչի՞ զի տանեքյ պռնեքյ: Որ տյուքյ աղեյկ դատաստան կտեսնաքյ, դու՛հ կայնեքյ իրիշկեքյ, ես ծե նշանց տամ: Խենքյ կճբճհճթ ի՞մն ի, թե ինոր:

Մարթուն տյուս կխանեն, վեց ոսկի կուտան ծեռ, կառնի մոտանա էտա կուրուն:

Կասի. - Ախպե՛ր, արե, ես վեց ոսկի ունեմ, իրեյքյ քյե, իրեյքյ՝ զի: Տանենքյ տենքյ սիրտս չպիրի միննակ ուտեմ:

Կորն ի կասի. - Մե հա քյո իրեքյ ոսկին տու, քյո՞ն ի թանձր, թե՞ իմ:

Մարթ ոսկիքյ կուրու ծեռ կլցի, մե խա կշրջի էն կող, էն կող, էլմ կտնի ծոց:

Մարթ կբաշլայի քյաշել, քյաշոտել:

Կասի. - Իրեքյ ոսկին տու՛ր, իրեքյ ոսկին թո մնա քյե:

- Չէ, - կասի կոր, - մո զի ոսկի չկա՛: Ի՞նչ ոսկի, ի՞նչ պճն:

Կասի, կբոռա: Մարթեր կթճփեն վերեն, կասին. - Ծո՛, կո՛ր, էլմ ի՞նչ ի էլեր:

Կասի. - Էրկու փճրճ եի ինգյեր ծեռս, էսա մարթ չամչնա, իկե զի կչլտի:

Մարթեր եփ կտիսնան, կուգյճն թճփեն վերեն, ոսկին կառնեն, կուտան էտա մարթուն, կճճմբխեն:

Իսոր կճլբութեն կտիսնան, աղեյմ էլ կտփեն, տուն կճճմբխեն:

Կասեն. - Մեկ էլ որ էսա տեղ գյճս՝ քյե կսպանենքյ: